«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ Fax: +374 10 564111 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/609

«23» 04 2021 թ.

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ ԻՇԽԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանուկյան,

Համաձայն 2021 թվականի փետրարի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և անհատ ձեռներեց Իշխան Մանուկյանի /այսուհետ՝ ԱՁ/ միջև կնքված տնտեսական և սանհիգենիկ ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագրի ԱՁ-ն պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները: Սակայն 01.04.2021թ. Համալսարան մուտք արված գրությամբ ԱՁ-ն տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագրի թիվ 27 չափաբաժնի մատակարարումից՝ պայմանագրային գնի շուկայական գնից էականորեն ցածր լինելու պատճառաբանմամբ:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 22.02.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով՝ կահույք մաքրելու կտոր:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որաշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է Ձեր գրությունը:

Առդիր 1 թերթ:

ՌԵԿՏՈՐ **Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

05/603
23.04.21

Երևանի Պետական Բժշկական Համալսարանի
ռեկտոր պարոն Արմեն Մուրադյանին
Ա/Զ Իշխան Մանուկյանից

Դիմում

Հարգելի պարոն Մուրադյան, սույն թվականի փետրվարի 22-ին Ա/Զ Իշխան Մանուկյանի և Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի միջև կնքված ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3 պայմանագրով Իշխան Մանուկյան Ա/Զ-ն պարտավորվում է Երևանի Պետական Բժշկական Համալսարանին մատակարարել թվով 7 չափաբաժիններով ապրանքներ, սակայն 27-րդ չափաբաժնով նախատեսված կահույք մաքրող կտորն Իշխան Մանուկյան Ա/Զ-ն հրաժարվում է մատակարարել, քանի որ պայմանագրով ամրագրված 90դրամը շուկայում առկա տվյալ ապրանքի գինից 3 անգամ էժան է և մատակարարման պարագայում առաջացող ֆինանսական վնասը մեծ է լինելու: Իշխան Մանուկյան Ա/Զ -ն գիտակցում է, որ իր կողմից է տեղի ունեցել գնային նման անհամապատասխանությունը և պատրաստ է կրել պատասխանատվություն համաձայն երկու կողմերի միջև կնքված տուժանքի մասին համաձայնագրերի(որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում):

Ա/Զ Իշխան Մանուկյան 01.04.2021թ

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄՏ. ՀԾ ԹՎ. 4598
01 04 21 թ.

ՀՀ «ԵՐԵՎԱՆԻ Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
ЕРЕВАНСКИЙ ГОС. МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ МХИТАРА ГЕРАЦИ
YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER MKHITAR HERATSI